

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Յ. Ի. Ծ. Ա. Տ. Ա. Կ. Ք.

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՅ

Ա. Զ. Գ.

Անցեալ տարուան կարգէ զուրս ջրոց ողողմունքն՝ նստի 'ի Ալեքսանդրական զաւառս Իտալիոյ, յետոյ նաև 'ի Գաղղիաս, 'ի Գերմանիա և ուրիշ աշխարհներ, որք դեռ բոլորովին ազատ ալ չեն թէ՛ ջրոյն և թէ՛ ևս առաւել անոր մնասներէն, յիշեցուց մեզի հետեւեալ գրպուածը, որ գրուած է նոյն ժամանակ աղօրէպանէ մը, որոյ անունն անծանօթ կը մնայ, վասն զի գրուածն ալ անկատար է. այլ իբրև հետաքրքրական, մանաւաճ. Կ. Պօլսեցոց, կը հրատարակեմք անփոփոխ պահելով գրողին շարագրութիւնը, միայն քսնի մի սխալ տառերը փոխելով:

Ա.

Հեղեղ 'ի Կոստանդնուպօլիս յամի 1789 .

Հայոց ՌԻՃԼԻԷրորդի հոկտեմբերի 11 երրորդի երկուշարաթի առուր առաւօտին, սաստիկ անձրև եկն 'ի Ստամբուլ, բազում մնաս հասուց քաղաքի և գիւղօրէից: Ի լուսանալ առաւօտին, գոռալով գըրգմամբ կայծակիւ սկսաւ ցօղալ իբր աղբիւր յերկնից, մարդիկ որ սնէ 'ի տուն ոչ կարային գնալ: Ժողովեցաւ ջուրը անձրևից 'ի լեռանամէջս այգեայ և 'ի պարտէզաց, 'ի ընթացս ճանապարհի. այնքան առատացաւ՝ որ ոչ կարէր տանիլ հեղեղատին:

Չէնկէլ գիւղի պատահումն են այսօրիկ. ձորամիջաց այգեաց և պարտէզաց ծառքն՝ աւելի քան զքսան հազարս կործանեաց. պարտէզպանից պարտէզքն իբր աւազուտ ձոր արար. եզր հեղեղատի տունքն՝ որն խախտեաց, որն փլուց և արար աւերակ. նախ նիգտէվիթարտարի լսօնախի գուռն և պատնի փլուց. Մուսայ էֆէնտիի տունն 'ի մի կողմն կործանեաց. Սիւլէյման ուստայի և Քանճա Հիւսէիի տունքն փլուց. և Հիւսէիի երկու աղջկունքն 'ի տանէ գուրս ելանեցն՝ մէկգմէկի հետ էտը ջուրն տարեալ ընկեց 'ի ծով. և ես յերկուզէ յայնմ պատուհասի՝ ելի 'ի վե-

րայ երկվարի՝ յուսալով 'ի Սուրբ Աստուածածինն, անմնաս գնացի Մանասէ ամիրայի եալըն. հայեցայ 'ի վերայ ծովի, տեսի այն երկու աղջկունքն լուսային 'ի վերայ ջրոյն՝ մերկ և գլխիբաց. յայնժամ գիւղի եղեալ պօստանճի նաւավարքն նաւով առին կենդանի աղջկունքն անմնաս: Փլուց Գամպուռ ուստայի տունն. էր Գամպուռ ուստան 'ի մէջ տանն. և խասէզի Ահմէտն զնալն 'ի ճանապարհի՝ փլու տունն. այս երկու անձինքս մնացին ներքև տանն. յետ երկու առու մարմինը սոցա հանեցին: Տարու այսմ՝ տանց առջևի կամուրջը, կործանեաց Հիւսէիին աղայի տունն, Չուռնաճի և Ստաբլս էֆէնտիի տունքն. փլուց Մազլում Գէորգի եալըի մէկ մասն, Քէթանճի չէլէպիի եալըն և խայէխտանէն: Մնաց գիւղի մերձ հեղեղատի տունքն 'ի մէջ ջրի՝ իբր չորս կանգուն. մէկ տուն հեռի էր Մուսայի Ահմէտ աղայի տունն 'ի հեղեղատէ՝ յորժամ լցաւ ջուր անձրևի 'ի տուն իւր, կայր կապեալ երկվար 'ի մէջ տանն. ել երկվարն լողալով 'ի դրանէ մերտիվէնի 'ի վերայ սօֆայի, մնաց երկու ժամ անդր: Չայն աղաղակի մարդկան և ճայթմանն

խըացուցանէր յախանձս լսողաց . յայն-
 ժամ եհաս ողորմութիւնն Աստուծոյ .
 փրչոց զպատ պարտէզի իայն եէմիչ կէօմ
 բիւկճիւսի Հաճի խալիլ աղային . ան-
 տանելի չուրն այն սկսաւ անտի քայ-
 լել . եղև այսքան ֆուսա մէկ և կէս ժա-
 մի և դադարեցաւ անձրև չորս ժամ :

Յապա սկսաւ անձրև հինգերորդ ժա-
 մուն առաւել քան զառաջինն . խախ-
 տեալ և մնացեալ ծառքն և տունքն այն
 փրչոց : Յայնժամ էի ես 'ի մէջ ջաղացի
 իմոյ , կամեցայ կրկին երիվարաւ դուրս
 ելանել . 'ի սրբնթացութենէ ջրոյն ոչ
 կարացի ելանել . առին պաշտօնհոյքն
 իմ զիս 'ի ուս իւրեանց , որ լի էր եր-
 կու կանգուն ջրով ջաղացս . կից ջաղա-
 ցի եղեալ պխալի խանութն կտուրե-
 ցին քէփէնկն , մնացի 'ի վերայ տեղ-
 կեահին 'ի մէջ ջրոյ . անհնար էր ընթա-
 նալով և մարդով դէմ առ դէմ անցա-
 նել 'ի սրբնթացութենէ ջրոյն . դէմ
 առ դէմ իբր կարմունճ փայտի ձգե-
 ցինք՝ երկու կողմանէ ձեռք տալով , հա-
 զիւ կարացին անցուցանել զիս 'ի խահ-
 վէճի ետմերի խանութն . առի պիտա-
 նացու տէվթէրս և թուղթքս . կրկին
 գնացի Մանասէ ամիրայի ետլուն . տեսի
 նաւ մի լի փայտիւ և ութ մարդով կա-
 պեալ կայր իսկէլէն . առժամայն փր-
 ճաւ և նաւ մերձ իսկէլէին , ընկղմեցաւ
 նաւն փայտիւ և մէկ մարդով եղև ան-
 երեոյթ . այն մնացեալ եօթմ մարդիկն
 զերծեալ ազատեցան 'ի ծովէ : Յայսմ
 պատահմանէն դադարման է ջաղացք
 մեր ընթանալոյ . երէկ չիֆթէ նաւ մի
 խրկեցի Ստանալով վասն առման ալբրի .
 առին ալուրն և ելին 'ի ճանապարհ .
 յցաւ նաւն անձրևի ջրով , հազիւ կարա-
 ցին Ստալոսզ հասնիլ . անկան 'ի խում
 սալ իսկէլէն , սկսան չուրն դուրս տալ ,
 առժամայն փաւ խայն խխանան , և Ալի
 էֆէնտիի տունն , պէճպէտի խանութն .
 քայլեց չուրն տարաւ նաւն հանդերձ
 ալբրի . 'ի ծովն , և զերծան նաւարարքն
 անֆուսա :

Յայսմ ժամու կաթ ծախող Պուլկար
 մի , Մանարայէն երկու կիւկիւմ կաթ
 երիվարին բեռցուցեր գեղէս անյնելու

ժամանակն , ինքն և երիվարն կաթիւն
 եղեն աներեոյթ 'ի մէջ մահալլէին . ոչ
 ոք ետես սա 'ի մէջ ջրի և ծովու : Եւս
 Աշծիօղի Մահմէտ պատանճի՝ ձկնորսի
 փոքր նաւով ձկնորսութիւն կ'ընէր . սա
 առեալ նաւն տարաւ նաւատեղն հա-
 նել 'ի ցամաք , առատացաւ չուրն , ինքն
 և նաւն ընկէց 'ի ծով . սոքա ևս եղեն
 աներեոյթ :

Սկսաւ դադարել երկու ու կէս ժամ .
 Ապա ութերորդ ժամուն կրկին ան-
 ձրեաց , սակաւ մի նուազ քան դուռա-
 ջինքն , քանզի հեղեղապք լայնացան 'ի
 բնթացմանէ ջրոցն , վասն այնորիկ ոչ
 ֆուստեաց կրկին մահալլէն . փաւ եօթե-
 նասուն և հինգ տուն ճահկաց , աւելի
 քան զքսան հաղարէն ծառք . մեռան
 չորս մարդք . բոլոր մահալլէի ջրհորքն
 յցաւ աւազիւ : Որուն քիչ՝ որուն բա-
 զում եղև ֆուսա առ հասարակ . ինձ
 շատ փայտ գնաց ծովն , և հարիւր յի-
 սուն չափ աղ հալեցաւ . և Պողազ իչիի
 գիւղից մեծաձոր տեղեանց ֆուսաքն քան
 զայլոցն առաւել եղև : Երեսս ծովու իբր
 ցամաք 'ի յայս մեր երևեցաւ . ծառք և
 փայտք , սանդուխ , սէրէթ , մինտեր ,
 քիլիմ , քէչէ , փլած տանցն գտանե-
 ցեալ անօթքն ամենայն 'ի երեսս ծովու
 լողայր , լային և կոծէին տեսաք ընչիցն .
 և գողանային Օրթագիւղի և խուզողուն .
 ճուխի նաւարար Հրեայքն . որն գողա-
 ցան՝ որն ընկղմեցաւ 'ի ծով , ամենին
 մէկ բան տէրն չկարաց գտանել . մնային
 հիւր այլոց տան մինչև եկեալ ամարայ-
 նոյ եղանակին , Եկն եզանակ ամարայ-
 նոյ , այգեպանք զայգիս իւրեանց շինե-
 ցին , պարտիզպանք զաւազս պարտէզի
 հանեցին , ցանեցին և տնկեցին պիտա-
 նացու ծառս և բոյսս պարտէզի : Տունք
 որ սակաւ ինչ խախտեալ էին նորոգե-
 ցին . 'ի հիմանէ փուլեցեալքն՝ սմանք նոր
 'ի նորոյ շինեցին և ոմանք ոչ կարացին
 շինել . և հասարակ ճանապարհք խի-
 ճախառն աւազով մինչ 'ի յայս կայ , որ
 մարդիկ գիւրընթացութեամբ իբր ա-
 ռաջին ճանապարհ ոչ կարեն գնալ և
 քալ :

Պատմութիւն մեծի սովոյն Տիպրասկերտի յամի 1759 * .

Նախամարզարէն Մովսէս մինչ առաքեցաւ . 'ի Տեառնէ 'ի քաղաքն եկիպատոս վասն պատժելոյ զՓարաոնն և զազգըն նորին, տասն մեծամեծ հարուածովք եհար զԷգիպտոս և զընտկիչան նորա . ըստ այնմ՝ օրինակի պատահեցաւ Տիգրանակերտու մերոյս քաղաքի և նահանգաց սորին, վասն մեղաց աղգիս մարդկայնոյ, յորժամ՝ ամենայն որ թիւրեաց զճանապարհս իւր, և առ հաստրակ հետեցան 'ի պատուիրանացն Աստուծոյ, և խտտրեցուցին զսիրաս իւրեանց առ 'ի շանսալ օրինացն նորա, և լսել ձայնի նորա . վասն որոյ 'ի պատիժ ապատամբութեան նոցա՝ առաքեաց զսով, յանձնին նոցա, և զամենայն զօրութիւն հացի երկի :

Քանզի 'ի թուականութեանս հայոց՝ ՌՄԵ, յամսեանն նոյեմբերի հնչեաց հողմն հիւսիսային կծու և ցրաաբեր . որ իսկոյն սառուցեալ պաղեցոյց զամենայն երկիրս . և օգն խռովեալ և պղտորեալ իբրև զծով ալէկոծեալ՝ սկըսաւ ձիւնել . և տեղացեալ ոչ թէ իբրև զձիւն, այլ ամենեւիմբ նման փոշոյ ծածկեաց զերեսս երկրի . և օր քան զօր խտտացեալ ցուրան առաւելաւ . մինչ զի մեծ գեան Տիգրիս սառուցեալ պաղեցաւ . որոյ վերայ զառուրս թ կտրաւանք և ճանապարհորդք՝ ուղտորք և գրաստիւք բեռնակիրք երթևեկիս առնէին . վասն որոյ որ ինչ և գտանիւր՝ թէ գինի և թէ քացիս, և այլ սոյնպիսի իրք գիծայինք սառուցեալք պաղեցան և աւերեցան . և զամանս իւրեանց խեցեղէնս և ապակեղէնս՝ պատուս .

տեալք քոյքայեցին . Եւ յաղբերացն ոչ որ կարէր բերել զվուր . զի ընդ բերնն 'ի ճանապարհին սառէր . և յօգէն միշտ հոսէին պաղեցեալ գորշիք իբրև զբուրգս գլեցեալս, ահարկու տեսողաց . և 'ի գիշերին ոչ որ կարէր ջեռնուլ 'ի ներքոյ անկողնոյ, թէպէտ և բազում՝ ձորձովք ծածկէին . և ընդ զարթնալն տեսանէին՝ զի հրեաք անկողնայն սառուցեալք էին վասն տուրևառութեան շնչոյն . և սառի ամենայն արուեստք և գործք խափանեցան . մանաւանդ երթևեկք ճանապարհորդաց . զի ոչ որ կարէր ելանել արտաքոյ շինութեանց և բնակութեանց, վասն սաստկութեան ցրտոյն . և ես վասն աճի զայլոց, որք կատարեալք ուսէին զկենդանի մարդս . Եւ սակս սաստկութեան ցրտոյն՝ ամենայն պողատու ծառք և տունկք գոստցեալք չորացան : Եւ այսպիսի նեղութեամբ և տառապանք էանց ձմեռնայն . զոր բողովք յաղբատաց և 'ի չքուրաց՝ վասն չունելոյ զածուխ և զգիւլտ և զհանդերձս ծածկութից՝ չորացեալք մեռան :

Եւ 'ի փոխիլ թուականութեանս մերոյ՝ ՌՄԶ, և հասանիլ 'ի մարտի առ միսն՝ թէպէտ թուլացաւ պառն, բայց որպէս 'ի ժամանակս եղիս մարգարէին եղեն 'ի վերջս երկինք պղծին, և երկիր երկաթի, նոյնպէս եղև և երկրիս այսմիկ . քանզի եղև նրաչաութիւն անձրևի, որ յայնմիկ գտրեան բնաւ ոչ տեղեաց անձրև կամ ցօղ յերկնից . մինչ զի 'ի սաստիկ չորութենէ երկրին սկսան ցամաքիլ 'ի բնէ և վաղեմի բըղ-

* Ինչպէս գրուածին վերջը կը յայտնուի՝ զօրոն է Յակոբ Տիգրանակերտոցի (Տիգրապէֆրոցի) Ապտուլահեան մականուամբ, և դպիր ըլլալն ալ՝ չարադրութենէն, զոր ամենինն անփոփոխ կը հրատարակեմք : Սա իր կրտսեր եղբարք (Յովհանն), վաճառականութեան պատճառ-

աւ 'ի Վենետիկ եկած և հաստատուած էր, ուր և վախճանեցաւ 84 տարուան, յամի 1836 . նոյնպէս եղբայրն ուլ 90 տարուան, յամի 1848 . հօն վախճանած է և քրքրերնին Լիլիպաթթ (1832) կին Քօնվալիիեան Ստեփանոսի Զուլայեցոյ :

խնայեալ մեծամեծ աղբիւրք: Վասն ուրոյ ամենայն ազգք ըստ ծիսի և օրինի իւրեանց կային յազօթս առ Տէր՝ պաղատանօք. այլազգիքն ելեալ արտաբոյ քաղաքին հետիոտս ամենայն մեծամեծօքն իւրեանց. և քրիստոնեայք յեկեղեցիս: Ստկայն մինչ մեզքն մեր դիզեցեալ և բարձրացեալ կայր ընդ երկինս իբրև զամպ մթազին, և որպէս զմէզ մառախլապատ, ոչ եղեն լսելի ալօթք անարժանից, և ոչ լուաւ Տէր գոչման և հեծութեան նոցա. այլ՝ փոխանակ քաղցրութեան՝ ետ հրաման սաստիկ մարտոյ, որք իբրև զսպառազինութիւնս անխիւ զօրաց՝ գոչացեալք՝ ի մերձակայիցն նինուէաւ՝ ծածկեցին զամենայն դաշտս և զգաւտառ. և կերեալ զամենայն արտորայս և զբոյսս զալարւոյ և ընտեղինաց՝ հասին մինչև ցմեծ դաշան Մբերտնու, որ ըստ այլազգեաց բարբառոյն Չօյ վերածայնի: Եւ այնքան էր բազմութիւն նոցա, որ ընդ բարձրանալն յօդս՝ կանոնին զչառակիզս արեգական, որ թուիւր միծօրիսայն որպէս զգիշեր. և ընդ թառիլն նոցա՝ ի վերայ երկրի՝ ծածկէին զերեսս գեանոյն իբրև զծիւն թանձրացեալ թզաշափ մի և այլ աւելի. ուստի կրծեալ չբացուցին զամենայն խոտ գալարի և բոյս կանանչեղէն. որ բնաւին շմեաց ինչ ուտելոյ՝ ոչ մարդկան և ոչ անասնոց: Վասն որոյ և տիրեաց սոցն երկրին այնմիկ ահարկու սաստիկութեամբ: Եւ յիտ այսր պատժոյ եկն յերկիր և ՚ի դաշտն յՈմթայ՝ փգրերկ թուռնն այն, որ մըրնիւնայ և դալարնի կոչի. և ըստ այլազգեաց բարբառոյն ֆրմվլ յորժորիլ. այն և ՚ի հրա մանէ Տեառն զօրացեալ անխիւր բազմութեամբ՝ ՚ի վրէժմնդրու թիւն մեղաց մարդկան՝ ծածկեաց զամենայն արտորայն. որ ՚ի միում հասկի՝ գրեթէ ճ և թճ հատ գտանիւր. և ծծեցին զամենայն հիւթ հատիցն՝ թէ ցորենոյ և թէ զարւոյ. որ ոչ այլ ինչ մնաց ՚ի նոսա, բայց միայն սոսկ յարգն:

Յորմէ պատճառէ սկսաւ սով սաստիկ լինել, որպիսի չէր եղեալ ՚ի բազում ժամանակաց հետէ, և ոչ էպք լուեալ ՚ի

հարանց կամ ՚ի պտտմութեանց. զոր անձամբ զփորձ առտը, և աչքը տեսարգի ցորենի քիլան է զուռուչէն ՚ի ժե և ՚ի իե զուռուչ. յետոյ Լ, Խ և Կ, և ապա մինչև ցլաթսուն զուռուչին եղիտ զտեղի. և տիրեաց սոցն ՚ի նինուէ քաղաքէն մինչև ցլաթսատիւ, և ՚ի Հալապու մինչև ցլաթգրում. յայլքան միջոցս ոչ գտանիւր հաց ուտելոյ: Վասն որոյ սկսան ալքատոքն հաշիլ և մաշիլ, և հիւժեալք սովալլուկ մեռանիլ՝ այնքան բազմութիւնք արանց և կտանց, որ գրեթէ ոչ գտանիւր փողոց մի՝ յորում ոչ գտանէին դիակուհք մարդկանց մեռելոց. որք մնային անխիւթալ՝ բազում աւուրս. և իբրև զդէշս անասնոց գիշատեալք և կերեալք լինէին ՚ի շանց. և ՚ի սոցանէ տարեալք զիզէին ՚ի բակ մզկիթաց, շարանս կարգաւ. որ ամենայն բակն ընտնիւր դիակալքք մեռելոց, և հազիւ մնայր նեղ իմն ճանապարհ անցանողաց, և այնպէս մնային երեք և չորս օր. և ապա անճար մնացեալք՝ մեծամեծք քաղաքիս՝ տային վարձս դիսպատից առ ՚ի բառնալ և թաղիլ, ոչ թէ յատուկ զերեզմանս, այլ վիհ մեծ արարեալ դնէին տաան և քսանն ՚ի միում փոսի, և ծածկէին սակաւ և նօսր հողով: Նոյնպէս և յեկեղեցիս քրիստոնէից այնքան բազմացեալ էր դէշ մեռելոցն, որ չէր հնար չորս արամբ բառնալ և դադաղաւ տանել, այլ բռնակրօք կրէին մի մի, երբեմն և զերկուքն ՚ի միասին շարակալ իբրև զգերանս փայտից, և դիզէին ՚ի զերեզմանատունս. փորէին վիհս, և անոր ծածկէին դազումս ՚ի միում փոսի: Վասն որոյ ՚ի փլութեան սոցս հոսեցաւ երկիրն, և սպականեցաւ օդն. և անկաւ մեծ հիւանդութիւն. որով սկսան մեռանիլ արք պատուաւորք և աղնուակամք՝ յագեալք հացիւ և կերակրօք: Յայնմիկ ժամանակի մուրացոդայն ոչ գոյր թիւ. զի երամսվին չուրջ դային ՚ի դրօնս մարդկանց. և խնդրէին գհաց. որոց զարհուրելի տեսութիւնն միայն բաւական էր զտեսօղոն հիացուցանել. մանաւանդ ձայն լալոյն և ողջ

բոյն նոցա գողացուցանէր զլսօղան: Եւ օր քան զօր զօրացաւ սոյնն և սաստկացաւ, մինչ զի սկսան ուտել զանսուրբ կենդանիս, զգորտ և զկրիս, և սպա զկատու և զչուն, որ ոչ մնաց 'ի սունս և 'ի փողոցս. և յետոյ հարկեցեալք սկսան զկենդանի մարդն գողանալ՝ մտնել և ուտել. զոր յետոյ սմանք 'ի նոյսնէ յայտնեցեալք եղեն, և կալեալք բերին առաջի քաղաքապետին. որոյ վերայ զվճիռ մահու հատին մասն մասն յօշատելոյ: Քանզի կալեալ զայր մի, գտին 'ի սան նորս զզլուխ և զձեռս փոքրիկ տղայոյ. զոր խարեալ տարեալ էր զնա 'ի սուն իւր. և մտնեալ զնա՝ կերեալ էր զմտրմին նորս. և մնացեալ էր զլուխն ստամբն և ձեռամբն հանդերձ. զոր կախեալ 'ի պարանոցէն՝ և բերեալ 'ի մեծ պողոտայն՝ խողովոցն զնա: Դոյնպէս և յուանն Հազրօ կոչեցեալ՝ երեք Գուրգ ընկերակցեալ՝ զբազում մարդիքս կերեալք էին. զոր իբրև ածին առաջի քաղաքապետին, բերանք իւրեանց պատմեցին, թէ քու սասուն մարգ մտնեալ կերաք, և զուսերտնս խորովեալ վաճառէաք 'ի սեղի պահարոյ մտոյ, զոր այլք առեալ ուտէին. և մեք այնու փողով զնեալ զհաց ուտէաք: Այլ և երեք կին յազգէ Մարաց զբազում տղայս կերեալք էին. զոր իմացեալ ոմանց՝ կսխեցին զորջս նոցա. և գտին զխուրց մի լի զլսով և ոտամբ տրայոց. և բարձեալ յուս կտնանց՝ ածին առաջի քաղաքապետին. և ընդ տեսանելն նորս՝ փշաքաղեցաւ մարմնով. և սաստիկ բարկութեամբ հրամայեաց սպանանել: Եւ մինչ տանէին զնոսա 'ի մահ, փոքրիկ տղայ մի նոցա 'ի ձեռն ունեցով զմի մարդոյ՝ տակաւին ուտելով երթեալ զմի նոսա. որ և զնա և սպանին յօշատմամբ որոյ ընդ մտն: Ուստի վասն այսպիսի սառուռուելի պատժոյս՝ ամենայն գիւղականք երամ երամ եղեալ կամէին փախչիլ յօտար երկիր. թերևս կարիցեն գտանել զյազուրգ: Եւ գնացեալ աւուր միոյ կամ երկուց աւուրց ճահապարհ՝ նուազեալք 'ի քաղցոյ՝ անկեալք մեռանէին:

Վասն որոյ ամենայն անցք ճանտապահայ ծածկեցան դիակամբ սովալուկ մեռելոց. որք ամենեքեան դիտտեցեալք 'ի վոյրի գազանաց՝ եղեն կերակուրք շանց և դայլոց. և ամենայն դուրայք անցին. ուր ոչ մնաց մարդ կենդանի. զի ամենեքեան մեռանէին 'ի մէջ տանց իւրեանց, և մնային ամականօք աւուրքք. զի ոչ գոյր ոք 'ր թաղէր զնոսա. յաղապս որոյ փուլեալ զամենայն գիւղորէից զտունան՝ կրեցին զամենայն գերան և զփայտ 'ի քաղաքն՝ և վաճառեցին. և այսպէս Տղարուր արեւերակք եղեն. և չկարծեմ թէ այլ ևս ինեւելոցք են մինչ ցյուսիտեանս. զի սերմ մարդկութեանս հատաւ. և շմաց մարդ՝ որ գործիցէ գերկիր: Եւ վասն այսպիսի խղճութեանս ոչ մնաց պատիւ կերպասեայ կամ բեհեզեայ պատմութեանց, ոչ ոսկեղէն կամ արծաթեղէն անօթուց, ոչ մարդարտեղինաց՝ և կամ դահար պատուական քարանց. ոչ պղնձեղինաց՝ և ոչ բրդեղինաց. զի վաճառօղքն բազում էին և զնօղքն սակաւ: Վասն որոյ ժ զուսուշի ապրանքն Բելուսուշէին առնուր: Եւ իբրև սպանուցին վաճառել զկահ և զկարասի՝ որ պատշաճիւր տան և կեցութեան մարդկան, սկսան զորդիս և զստերս վաճառել, բայց յոյժ ցածագին և թեթեւ գնով՝ քան զհորթ մի կովու կամ զաւանակ մի իշոյ: Եւ այսպիսեաւ աղէտալից դառնութեամբ էանց ամե բոլոր. և չէր ոք կարող զխմարն 'ի փուռն տանել առ 'ի եփել զհաց. զի իսկոյն 'ի վերոյ հասեալք թալանէին. և կարօղքն 'ի ձեռաց տկարացն կորզէին ըզհացն, և 'ի կուլ տային. վասն որոյ սրօք և բրօք թիկնապահք գնալոցք էին ընդ հացին: Եւ քաղաքս յԱմիթ իբրու թէ ամայի եղեալ գատարկ մնաց 'ի բնակչաց. և Բմասն քաղաքիս սունք և խանութք փրան և աւերակք եղեն: Քանզի գրով 'ի համարի կալեալ ծանեան զըստապահք քաղաքիս, որ Ձի մարդ նքողեալք 'ի սովու նւալով և տքալով մեռան: Մինչև 'ի գուլթ շարժեալ մարդասիրին Աստուծոյ՝ յիշեաց, թէ մար-

մին են նորա, հոգի՛ որ ելունէ՛ ոչ ես
 դառնայ. վասն որոյ դարձուցեալ զցա-
 սուծն բարկութեան 'ի գութ ողորմու-
 թեան, 'ի գալ զարնանային եղանակին՝
 երաց զգրունս երկնից, և ցոզեաց գա-
 ռաա առնձրես 'ի վերայ երկրի. և ետ
 զգորութիւն հողոյ, որ առատապէս ետ
 զպտուղ սերմանոյ. և սոքն օր քան զօր
 սկսաւ թուլանալ. որպէս 'ի ժամանակս
 Նոյի զհեղեղ ջուրցն նուազեցոյց. և 'ի
 հասանել ժամանակի կալոց և հնձոց
 երարձ զսոքն յերկրէս. և յաղեցոյց
 զպա մարդկային ազգի, տալով զիսու-
 թիւն յանձինս նոցա. քանզի ոչ միայն
 սով հացի էր, այլ ամենայն ուտելոց,
 ընդեղինաց և բարջարեղենաց, որ ոչ
 դատնիր. և թէ գտանիր ևս, այնպէս
 թանկագին, զոր ոչ դր բաւէր հատու-
 ցանել նմա զգին արձաթով: Որ և սակս
 լու իմանալոյ բարեպաշտութեան ձե-
 ռում՝ զոմանց իրաց զգինսն աստ զրով
 գրոյմել, զի տեղեկացեալ ձեր ժամա-
 նակիս գառնութեանն՝ մեծաւ հիաց-
 մամբ զարմասցիք: Չարեկ մի ցորեան՝
 է զուռուչ. չարեկ դարի կամ կորեկ՝
 Ծ զուռուչ. լիտր մի իւղ՝ վեց զուռուչ.
 լիտր մի հաց՝ երեք զուռուչ. լիտր մի
 պանիր՝ Գ զուռուչ. լիտր մի բրինձ՝ Գ
 զուռուչ. հատ մի հաւ՝ զուռուչ և կէս.
 հատ մի հակիթ՝ ժե ստակ. լիտր մի
 քաղցու՝ Գ զուռուչ. լիտր մի չամիչ՝ Գ
 զուռուչ. լիտր մի սոխ՝ Բ զուռուչ. լիտր
 մի սխտոր՝ Ը զուռուչ. լիտր մի շոգրամ՝

կամ զղուժ կամ բանծոր Ո. Ո. զուռուչ.
 և զայլնս ըստ այսմ՝ զիտասցիք: Եւ զայ-
 ստակ վասն այն գրեցի, որպէս զի յե-
 տաղայ դալօզք և ընթերցօզք այսր
 պատմութեանս՝ զգուշացեալք 'ի մե-
 րաց՝ մի բարկացուցանիցէք զՍրարիչն
 երկնի և երկրի, և վասն յոնցանայ
 ձերոց արդինսնաւորիցիք ընդունել զոյս
 պիտի պատիժ պատուհասի յարգարա-
 դատ Տեառնէն. որովհետեւ մեք ան-
 ձամբ զիրքձ առեալ այդպիսի պատժոյ
 և բարկութեանս՝ կամեցաք զրել 'ի
 քարտիզի զոյսպիտի աղէտ դառնու-
 թեանս. զի մի և զուրք յանցանօզք զը-
 լուժ հրամանին Աստուծոյ՝ ընկալցիք
 զայսպիսի վրէժխնդրութիւն յանալառ
 պատաւորէն. այլ ըստ օրինաց և հրա-
 մանի Տեառն շարժեալք՝ ընկալցիք զվը-
 տուղ արդեանց և վաստակոց ձերոց,
 և կեցցիք խաղաղութեամբ:

Վասն որոյ ես նուաստ և յետնեալ
 ծառայակից ձեր 'ի Քրիստոս, Յակոբ
 մեղապարտ և անարժան զպիր, ըստ
 իմոյ տգէտ և ախմար գիտութեանս,
 որովհետեւ ականատես եղէ ամենայն
 եղիլոցս, զրեղի պատմողբարթ թարց
 իմիք ստութեան՝ ումենայն ճշմարտու-
 թեամբ. որպէս զի ընթերցօզք այսր
 պատմութեանս՝ օրհնաւաք բերանով
 վառս վերառաքեսցիք ամենազօր տե-
 ռութեանն Հօր և Որդոյ և Հոգւոյն
 Սրբոյ յամենայն յախտեանս յաւիտե-
 նից. ամէն:

ՄՐԻԿՔ ԵՒ ՀԵՂԵՂՔ Ի ԹՈՐԹՈՒՄ

Ի 5 օգոստոսի թողուցի զլրդիւում,
 տարբեր ճամբայ մը բռնելով՝ իմ՝ Թոր-
 թումի առաջին ուղևորութեանս ճամ-
 բէն: Էռչք գեղն անցանք: ... Իրիկունը
 Քարահուրդ գեղը կեցանք: ... Այդ չե-
 զած, կարաւուց կրկնալէն արթնցանք.
 փութով ճամբայ ինկանք, և երկկոյեան
 չորսին 'ի Սահրէր էինք. ուր գնացի
 օթազայելու այն ասպնջականին տունը՝
 ուր նախնիքաց տարին բնակեր էի:
 Հաղու իջնաներ էինք, ուժգին մրրիկ

մը, որու գալուստը հեղձուցիչ տաքէն
 և մթնոլորտին ծանրութենէն առաւօ-
 տունէն 'ի վեր կ'իմացուէր, վրթաւ
 յանկարծակի որոտմամբ, որոց բոմ-
 բինը աւելի ահարկու կ'ընէր լերանց
 արձագանքն: Անձրին և կարկուտն ան-
 կարծելի սաստկութեամբ ժամէ մը ա-
 ւելի թափեցան: Սակայն այս մէտէո-
 ռակն երկուրէն քիչ խուզելով, և
 այսպիսի ատեն մը ծածկի տակ զըս-
 նուելուս բոլորովին գոհ, հանդարտու-